

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

2010թ. սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ, որին մասնակցում էին գիտխորհրդի 29 անդամ:

Օրակարգ՝

1.ԳՊՀ ուսանողների ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով փոխհատուցելու կարգի քննարկում և հաստատում:

/ զեկ.՝ Ն.Ա.Կուտուզյան /

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2009-2010 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ.՝ Վ.Լ. Կատվայան /

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2009-2010 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ.՝ Մ.Պ.Ավագյան /

4.Ակադեմիական ազնվության հանձնաժողովում դասախոսների ընտրություն:

5.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ ուսանողների ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով փոխհատուցելու կարգը ներկայացրեց ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Ծավալվեց մտքերի փոխանակում, ելույթ ունեցան Ռ.Հակոբյանը, Վ.Կատվայանը, Հ.Հարությունյանը, Հ.Ղաջոյանը: Առաջարկվեց հաստատել կարգը:

ԲՖ դեկան Վ.Լ.Կատվայանը ներկայացրեց բանասիրական ֆակուլտետի 2009-10

ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը, իսկ այնուհետև՝ 2010-2011 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԲՆՖ դեկան Մ.Ա.Վազյանը:

Զեկուցողները մանրամասնորեն անդրադարձան իրենց ֆակուլտետներում կատարված աշխատանքներին, անցկացված տարաբնույթ միջոցառումներին, նշեցին և դրականը, և թերին: ԲՆ դեկան Վ.Կատվայանը ներկայացրեց նաև ֆակուլտետի 2010-2011 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը, որը կազմված էր հանգամանորեն՝ զարգացման միտումների հաշվառմամբ: ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանն առաջարկեց ԲՆՖ հայեցակարգը քննարկել հաջորդ նիստին, իսկ ֆակուլտետներում կատարված աշխատանքները գնահատել բավարար / կից ներկայացվում են զեկուցումները /:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը: Նա ասաց, որ արդեն ընդունված է ակադեմիական ազնվության մասին ԳՊՀ հայեցակարգը, ուստի պետք է դասախոսական անձնակազմից ընտրել հանձնաժողովի 2 անդամ: Բաց քվեարկությամբ ակադեմիական ազնվության հանձնաժողովի անդամներ ընտրվեցին Թ.Ա.Ասոյանը և Հ.Գ.Ղաջոյանը:

Անդրադառնալով համալսարանի ընթացիկ հարցերին՝ Ռ.Հակոբյանը օրինաչափ համարեց դիմորդների աճը հեռակա ուսուցման ֆակուլտետում՝ դա համարելով լավ աշխատանքի արդյունք: Այնուհետև կարևորվեցին ԳՊՀ համագործակցության պայմանագրերի վավերացման, գիտաժողովին նախապատրաստվելու, ուսանողական խորհրդի նախագահի ընտրությունը ճիշտ կազմակերպելու և անցկացնելու հարցերը:

Այնուհետև առաջարկվեց ԳՊՀ խորհրդի անդամներ առաջադրել ԳՊՀ պրոֆեսոր Հ. Հակոբյանին, ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուսուզյանին, ԳՊՀ ԲՆ դեկան Վ.Կատվայանին, ԳՊՀ ամբիոնի վարիչ Հ.Մելիքյանին, ԳՊՀ պրոֆեսոր Ի.Խլղաթյանին, ԳՊՀ դասախոս Պ.Մուրադյանին:

Ամփոփելով նիստի աշխատանքը՝ ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանն ասաց, որ այսուհետև ևս միասնական աշխատանքը կտա իր դրական արդյունքը:

Որոշեցին՝

1. Հաստատել ԳՊՀ ուսանողների ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով փոխհատուցելու կարգը:

2. ԲՖ դեկան Վ.Լ.Կատվայանի՝ բանասիրական ֆակուլտետի 2009-2010 ուստարվա գործունեության հաշվետվությունն ու 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգը ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3. ԲՆՖ դեկան Մ.Պ.Ավագյանի՝ բնագիտական ֆակուլտետի 2009-2010 ուստարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. ԲՆՖ 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացումն ու քննարկումը տեղափոխել հաջորդ նիստ:

5. Հաստատել ԳՊՀ համագործակցության վերաբերյալ պայմանագրերը:

6. Ակադեմիական ազնվության հանձնաժողովի անդամներ հաստատել Թ.Ասոյանին և Հ.Ղաջոյանին:

7. ԳՊՀ կառավարման խորհրդի անդամներ առաջադրել Հ.Հակոբյանին, Ն.Կուտուզյանին, Վ.Կատվայանին, Հ.Մելիքյանին, Ի.Խլղաթյանին, Պ.Մուրադյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ.Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

2010թ. հոկտեմբերի 30- ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 26 անդամ:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ Մ.Պ.Ավագյան /

2.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2009-2010 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ Հ.Գ.Ղաջոյան /

3.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2009-2010 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ՝ Ս.Գ.Ամիրխանյան /

4.Ընթացիկ հարցեր:

Զեկուցողները մանրամասնորեն ներկայացրին 2009-2010 ուսումնական տարվա ընթացքում կատարած աշխատանքները, կատարեցին վերլուծություններ և եզրահանգումներ: Կատարված աշխատանքների հիմքի վրա էլ կառուցված էին 2010-2011 ուսումնական տարվա հայեցակարգերը: Հաշվի էին առնված նաև թերություններն ու բացթողումները:

Պրոռեկտոր Ն. Կուտուզյանը ներկայացրեց Թ.Ալեքսանյանի «Կապակցված խոսքի զարգացում» և Ա. Մուխսիխաչոյանի «Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա» / ռուսերեն / ձեռնարկները և առաջարկեց երաշխավորել տպագրության:

Այնուհետև Ն.Կուտուզյանն անդրադարձավ ձևաթղթերի, անվճար ուսուցման դեպքում 1-ին կուրսում միջանկյալների վերահանձնում թույլ չտալու, դիպլոմային աշխատանքների թույլտվության հարցերին:

Իրեն դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցով գիտխորհրդին էր դիմել տեխնիկական գիտությունների թեկնածու Մ. Հակոբյանը, որի ներկայացրած փաստաթղթերը բավարարուն էին ԲՈՀ-ի առաջադրած պահանջները: Տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն:

Որոշեցին՝

1.Մ.Ավագյանի, Հ.Ղաջոյանի, Ս.Ամիրխանյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները համարել բավարար:

2.Տպագրության երաշխավորել Թ.Ալեքսանյանի, Ա.Մուխսիխաչոյանի ձեռնարկները:

3.Մ. Հակոբյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և սույն որոշումը ներկայացնել Բարձրագույն որակավորման հանձնաժողով՝ հաստատման:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

2010թ. նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 28 անդամներ:

Օրակարգ`

1.ԳՊՀ 2009-2010 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվություն և զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ` պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյան /

2.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2009-2010 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն և 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ` պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյան /

3.ԳՊՀ 2009-2010 ուստարվա վարչատնտեսական գործունեության հաշվետվություն և 2010-2011 ուսումնական տարում ոլորտի աշխատանքների քարելավման ծրագրի ներկայացում:

/ զեկ` պրոռեկտոր Ա.Հ.Ապրոյան /

4.Ընթացիկ հարցեր:

2009-2010 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունը և 2010-2011 ուստարվա զարգացման հայեցակարգը ներկայացրեց պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Նա ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կատարած աշխատանքները, որոնք ընթացել են հետևյալ ուղղություններով.

1.ուսումնական գործընթացի կազմակերպում, բուհում իրականացվող կրթական ծրագրերի գնահատում, վերանայում և կատարելագործում,

2.գիտահետազոտական, գիտամեթոդական աշխատանքների իրականացում,

3.կրթադաստիարակչական աշխատանքների, ուսանողական ակտիվ կյանքի կազմակերպում, ուսանողների հետազոտական, ստեղծագործական ունակությունների զարգացում,

4.համալսարանի միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնում, հանրության հետ կապերի ամրապնդում:

Այնուհետև ներկայացվեցին ուսանողական կազմի համալրման, ուսանողների ակադեմիական առաջադիմության, նոր ու մշակված կանոնակարգերի ընդունման, գիտական աստիճանների ու կոչումների շնորհման, տպագրության երաշխավորված գրքերի հրատարակման ցուցանիշները և այլն:

Զեկուցման վերջում ներկայացվեց ԳՊՀ ուսումնագիտական զարգացման հայեցակարգը, ըստ որի կիրականացվեն հետևյալ աշխատանքները.

1.Ուսումնամեթոդական աշխատանքներ

2.Գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներ

3.Հանրության հետ կապերի ամրապնդմանն ուղղված աշխատանքներ

4.Դասախոսական կազմի շարունակական մասնագիտական աճի ապահովմանն ուղղված աշխատանքներ:

Օրակարգի 2-րդ հարցի մասին զեկուցեց ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Զեկուցողը ներկայացրեց հաշվետու ուսումնական տարում կատարված աշխատանքները, որոնք իրականացվել են ըստ ռեկտորի հրամանագրով ամրագրված ժամանակացույցի և համալսարանում գործող կանոնակարգերի: Ուշադրություն դարձվեց ըստ մասնագիտությունների ուսանողների բաշխվածության և կարգապահության, տեղաշարժերի առաջադիմության հարցերին:

Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց նաև հեռակա ուսուցման ֆակուլտետի զարգացման հայեցակարգը:

ԳՊՀ 2009-2010 ուսումնական տարվա վարչատնտեսական գործունեության հաշվետվությունը և 2010-2011 ուսումնական տարվա աշխատանքների ծրագիրը

ներկայացրեց պրոռեկտոր Ա. Ապրոյանը: Նա թվարկեց այն աշխատանքները, որոնք կատարվել են համալսարանում և ուշադրություն հրավիրեց կատարվելիք վերանորոգման աշխատանքների, գույքի ձեռքբերման, նոր ենթակառուցվածքների ստեղծման և ծրագրային այլ հարցերի վրա:

Որոշեցին՝

1. ԳՊՀ 2009-2010 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունն և ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2009-2010 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ 2010-2011 ուստարվա ուսումնագիտական գործունեության և ՀՈՒՖ զարգացման հայեցակարգերին:

2. ԳՊՀ 2009-2010 ուստարվա վարչատնտեսական գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար, հավանություն տալ 2010-2011 ուստարվա վարչատնտեսական գործունեության ծրագրին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ.Ա. Ասոյան